

ՏԻԵԶԵՐՔԻ ԱՐՄՈՆԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ Ս. Պողոսյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վաղուց արդեն նկատվել է մի օրինաչափություն, երբ գիտության տվյալ բնագավառում առաջանում է խորը ճգնաժամ, ապա այն հաղթահարվում է ուսումնասիրության բոլորովին նոր օբյեկտի բացահայտմամբ: Այդպիսի իրավիճակ է տիրում, իմ կարծիքով, բնագիտության՝ լայն իմաստով ֆիզիկայի բնագավառում: Ե՛վ միկրոաշխարհի, ե՛լ մեզաաշխարհի ուսումնասիրության ոլորտներում սպասվում է ֆիզիկական սիստեմների մի նոր դասի հայտնագործում: Հիացմունք է պատճառում այն հանգամանքը, որ ֆիզիկոսներից ավելի խորանուխները (Մ. Սարկով եւ ուրիշներ) գտնում են, որ նոր տիպի ֆիզիկական այն օբյեկտը միաժամանակ պատկանում է ե՛լ միկրոաշխարհին, ե՛լ մեզաաշխարհին: Անտիկ փիլիսոփա Անաքսագորի այս հրաշալի գաղափարը վերածնվում է արդի գիտության համապատասխան լրացումներով:

Շուրջ հինգ հազար տարի ընթացող նախամատերիայի որոնումները այսօր, ըստ երեւոյթին, հասել են կուլմինացիայի եւ երեւի թե մարդկությունը չի կարող երրորդ հազարամյակ մտնել առանց գտնելու այդ հարցի պատասխանը: Իսկ պատասխանը բխում է ոչ միայն արդի կոսմոլոգիայի եւ միկրոֆիզիկայի զարգացման ներքին օրինաչափություններից, այլեւ աշխարհի մասին գիտական պատկերացումների պատմական զարգացման ընդհանուր տրամաբանությունից: Խոսքը կոսմոլոգիական պատկերացումների պատմական զարգացման պրոցեսում վաղուց նկատված օրինաչափությունների եւ դրանցից բխող հետեւությունների մասին է:

Գիտության պատմությունը առանձնացնում է չորս հիմնական փուլեր.

- I. Պողոմենոսի Երկրակենտրոն համակարգը:
- II. Կոպեռնիկոսի արեւակենտրոն համակարգը: Այն ցույց տվեց նախորդի սահմանափակությունը եւ ժխտելով Երկրի ունիկալությունը՝ ապացուցեց նրա պատկանելությունը մոլորակների դասին:
- III. Նյուտոն-Հերշելի աստղային աշխարհի մոդելը: Այդ «Աշխարհի սիստեմը» ունի կենտրոն, որը աստղերի կուտակում է եւ որից դեպի ծայրամասերը հեռանալիս խտությունը նվազում է: Սա փաստորեն

Գալակտիկայի նախամոդելն էր, որը բացահայտեց Կոպեռնիկոսի համակարգի սահմանափակությունը եւ Արեւի պատկանելությունը աստղերի դասին: Սա նշանակում է, որ աստղերի գիտական հայտնագործումը տեղի ունեցավ այս փուլում, երբ պարզվեց, որ հեռավոր այդ լուսատուները մեր Արեգակի նման համակարգեր են: IV. 20-րդ դարի կոսմոլոգիան, որի հիմքում ընկած է Ա. Էյն-շտեյնի հարաբերականության ընդհանուր տեսությունը, ժխտեց ընդհանրապես կենտրոնի գաղափարը եւ գալակտիկաների ու դրանց կոսմոսկոմենների հայտնաբերմամբ բացեց կոսմոլոգիական ընդլայնումը:

Այսպիսով, յուրաքանչյուր փուլում ստեղծված «աշխարհի սիստեմ», ինքը հավակնելով համընդգրկելիության՝ հիմնավորում է նախորդի սահմանափակությունը (որոշակիորեն ընդգրկելով իր մեջ նախորդի ճշգրտված տարբերակը) եւ բացահայտում ֆիզիկական, ավելի ճիշտ՝ տիեզերական մարմինների մի ամբողջ նոր դաս: Բանը նրանումն է, որ յուրաքանչյուր «աշխարհի սիստեմ» որպես կենտրոն ընդունելով որեւէ երկրային մարմին, համարում է այն հազվագյուտ, մեկը, միակը: Մինչդեռ հաջորդ պատմական փուլում բացահայտվում են նման մարմինների մի ամբողջ բազմություն եւ ժխտելով այդ մարմնի տիեզերքի կենտրոն լինելը, այն տեղափոխվում է համակարգի ծայրամաս: Այդպես եղել է բոլոր փուլերում: Միայն քսաներորդ դարի կոսմոլոգիան օրիգինալություն դրսեւորեց այդ հարցում՝ ընդհանրապես ցխտելով կենտրոնի գաղափարը: Մի հանգամանք, որը դարասկզբին որոշ դրական դեր խաղալով հանդերձ, իմ համոզմամբ, դարձավ ժամանակակից կոսմոլոգիական ճգնաժամի հիմնական պատճառներից մեկը: Այդ ճգնաժամը հաղթահարելու համար պետք է հաշվի առնել վերը նշված պատմական օրինաչափությունները եւ որպես հիմք ընդունել դրանցից բխող հետեւյալ գաղափարները.

1. Այսօրվա կոսմոլոգիական պատկերացումները, որոնք եւս հավակնում են անվերջ Տիեզերքը նկարագրելուն, հիմնականում վերաբերում են մեր Մետագալակտիկային՝ համեմատաբար սահմանափակ տիեզերական մի համակարգի, որը ընդլայնվում է (անվերջ Տիեզերքում չի կարող գերիշխել շարժման, փոփոխման միայն մի տեմդենցը՝ ծավալումը), իսկ շատ միլիարդավոր տարիներ առաջ եղել է չափից դուրս սեղմ...

2. Մեր Մետագալակտիկան համանման մարմինների (ֆիզիկական սիստեմների) մի ամբողջ դասի ներկայացուցիչ է: Տիեզերքների կամ Մետագալակտիկաների բազմաքանակության գաղափարը առաջ է քաշել եւ պաշտպանել ակադեմիկոս Վ. Համբարձումյանը:

3. Քանի որ կոսմոլոգիական ընդլայնումը վերաբերում է Մետագալակտիկային, հետեւապես պիտի վերականգնենք

Մետազալակտիկայի կենտրոնի գաղափարը. ինչպես կարող է լինել թելուզ տիեզերական մասշտաբների, բայց եւ սահմանափակ, լոկալ սիստեմ եւ չունենալ սիստեմագոյացման կենտրոն: Միայն անվերջ Տիեզերքը կարող է կենտրոն չունենալ: Այսպիսով, տեղի է ունենում գիտության պատմական զարգացման մեջ Չեզելի դիալեկտիկայի հայտնի բացասման բացասումը... Ժխտելով էյնշտեյնի կենտրոնի բացակայության գաղափարը, վերականգնում ենք Նյուտոնի պատկերացումը կենտրոնի մասին: Կենտրոն, որից դեպի ծայրամասերը գնալիս, նյութի միջին խտությունը նվազում է:

4. Մետազալակտիկայի խոշորամասշտաբ կառուցվածքի առաջացման բոլորովին նոր մոտեցում, որի համաձայն Մետազալակտիկայի կենտրոն-միջուկից պարբերաբար անջատվում են ոչ լուսատու մարմիններ, որոնք հեռանալով միջուկից, «սառչում են» ու բոցավառվում՝ վերածվելով քվազարների: Այս վերջիններս էլ հետագայում էվոլյուցիա են ապրում՝ վերածվելով նախ գնդաձեւ գերկուտակման, ապա գալակտիկաների հասուն գերկուտակման: Ուրեմն, մի կողմից հաստատվում է, իհարկե, նոր ձեւով, Մետազալակտիկայի կառուցվածքի ձեւավորման Բյուրականյան մոտեցումը եւ, ապա առաջ քաշվում կոսմոլոգիական ընդլայնմանը զուգընթաց դրական զանգվածի առաջացման եւ միջուկից դրա արտամղման պրոցեսի անընդհատության գաղափարը:

5. Մետազալակտիկայի կենտրոնով կամ միջուկով մոդելից բխում է եւս մի տպավորիչ հետեւություն. տեղի է ունենում Կոպեռնիկոսի «ռեֆորմի» նման մի բան: Անհրաժեշտ է Մետազալակտիկայի խոշորամասշտաբ կառուցվածքի տեսանելի պատկերը այլ կերպ մեկնաբանել: Այդ պատկերում քվազարները տեղաբաշխված են ծայրամասերում, մինչդեռ, իմ կարծիքով, իրականում քվազարները գտնվում են կենտրոն-միջուկի մոտերքում, իսկ գալակտիկաների գերկուտակումները՝ ծայրամասերում:

Ահա այսպիսի եւ նման բավականին «խելագար» գաղափարների հիման վրա է ստեղծվել Արմոնների տեսությունը:



ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ**ՀԱԶԱՐ ԱՓՍՈՍ ԳԵՎՈՐԳ ԶԱՐՈՒԿՅԱՆԸ**

Առհասարակ կարճ է մարդու երկրային կյանքը. մարդիկ կան, որոնց ապրելու տևողությունը՝ որքան էլ համեմատաբար երկար, ցավալիորեն քիչ է: Այսպես ենք մտածում մեծ մարդկանց, իրենց ողջ գիտակցական կյանքը հայրենի գիտությանն ու մշակույթին նվիրած հզոր անհատականությունների, մեզ հարազատ ու սիրելի դարձած անձնավորությունների մասին, եւ այս խոհերը համակեցին սիրելի ուսուցիչ Գեւորգ Ջահուկյանի հիվանդության ու մահվան գույժը լսելիս: 85-րդ տարում կյանքից հեռացավ նա՝ աշխարհահռչակ լեզվաբան, 1962 թվից Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի տնօրեն, Երեւանի պետական համալսարանի եւ Վ. Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտի երկարամյա դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գեւորգ Բեգլարի Ջահուկյանը: Նրա մահով ծանր կորուստ կրեցին ոչ միայն այն գիտակրթական հաստատությունները, որոնց կայացման ու բարձր հեղինակության ապահովման համար մեծ ջանքեր էր ներդրել նա, այլև մեր ողջ ժողովուրդը, հայրենական գիտությունը եւ համաշխարհային լեզվաբանական միտքն առհասարակ: Գիտնականի նախանձելի տիպար էր նա, գիտության իսկական ու անմնացորդ նվիրյալ, որ գրեթե չունեցավ անձնական կյանք, ապրեց հայոց լեզուն իր բոլոր դրսեւորումներով ուսումնասիրելու, հայ լեզվաբանական միտքը զորացնելու, հայագիտությունը զարգացնելու հստակ նպատակադրմամբ ու երբեք չդավաճանեց իր սկզբունքներին: Հին ու նոր լեզուների ցեղակցության, ընդհանուր եւ համեմատական լեզվաբանության տարաբնույթ խնդիրների գիտական քննություն, հայերենի կառուցվածքի, նախագրային հայերենի, վերջինիս հին, միջին ու նոր շրջանների պատմության, հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության ու ոճագիտության ուսումնասիրում, բարբառների քննություն ու դասակարգում...

Եթե այս ամենին գումարենք նաեւ մահվան պատճառով անավարտ մնացած ստուգաբանական բառարանը, կպատկերացնենք նրա ահռելի գիտական վաստակի կշիռն ու արժեքը: Բոլոր դեպքերում այսքանը մի մարդու կյանքի եւ հնարավորությունների սահմաններում տեղավորելը դժվար է:

Հր. Աճառյանի ասպիրանտն իր մեծահամբավ ուսուցչից շատ բան էր ժառանգել եւ շատ կողմերով հիշեցնում էր նրան. նրա պես լայնախոհ էր, աշխատասեր, տիրապետում էր հին ու նոր բազմաթիվ լեզուների, ուներ գիտական լայն հետաքրքրություններ, մեծ ու ընդգրկուն տեսադաշտ, սուր դիտողականություն, օժտված էր փաստերը համակարգելու եւ օրինաչափություններ բացահայտելու բացառիկ կարողությամբ: Մեծ գիտնականի այս առավելությունները դրսեւորվել են ընդհանուր լեզվաբանությանը եւ հայերենագիտությանը նվիրված շուրջ երեք տասնյակ կոթողային աշխատություններում, բուհական ու դպրոցական դասագրքերում, որոնց արժեւորումը մասնագետների խնդիրն է:

Ուսուցիչ էր նա, Սարդ ու Քաղաքացի՝ այդ հասկացությունների լավագույն իմաստով: Չի եղել հայ ժողովրդին, նրա գիտությանն ու մշակույթին վերաբերող որեւէ հիմնախնդիր, որի կապակցությամբ նա չասեր իր ծանրակշիռ խոսքը: Եվ չէինք պատկերացնում, որ ընդհանուր լեզվաբանության դժվարին դասընթացը վարող, երբեմն դասախոսությունն ընդհատելով սրամտող, զվարճալի անեկդոտներ պատմող ընկեր Ջահուկյանը այդ մեծ գիտնականն է: Հետո մտերմացանք ու ավելի հասկացանք նրան, երբ արդեն միասին էինք կրում դասախոսի խաչը:

Հաճելի գրուցակից էր, գնահատում էր սրամտությունը: Հատուկ սեր ուներ գրականության նկատմամբ. սիրում էր համաշխարհային քնարերգությունը, հաճախ գերմաներենով արտասանում էր Գյոթեից ու Հայնեից, ռուսերենով՝ Պուշկինից, Լերմոնտովից, Եսենինից, հրաշալի գիտեր Նարեկացուն, Քուչակին, Սայաթ-Նովային, Դուրյանին, Պարոնյանին, Օտյանին, Թումանյանին, Սիամանթոյին, Չարենցին ու նորագույն մյուս բանաստեղծներին, իսկ Իսահակյանի սիրային բանաստեղծությունները հիշում եւ հիշեցնում էր առանձին ոգեւորությամբ: Ավելի ուշ իմացանք նրա մի նվիրական գաղտնիքը. բանաստեղծություններ էր գրում եւ այն էլ ի՛նչ տաղանդով: Դա զգացին ու գնահատեցին նրա բանաստեղծությունների միակ ժողովածուի ընթերցողները:

Գեւորգ Ջահուկյանը խտացված կյանք էր, ուսանողների, հարազատների ու մեր ժողովրդի հոգսերով ապրող գերազնիվ հոգի: Նա մեր գիտական մտքի գերազանցությունն էր ու մեր ժողովրդի պատվաբեր հպարտությունը:

Հազա՛ր ափսոս Գեւորգ Ջահուկյանը, մեծ հայն ու մտավորականը:

Մի մխիթարություն ունենք՝ նրա վիթխարի գիտական ժառանգությունը, որ լուսավորելու է գալիք սերունդների ճանապարհը:

***ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ, Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր***